ԳՈՐԲԱՉՈՎՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ (1985-1990 ԹԹ.)

ՄԱՏԻՆՅԱՆ Լ.Վ., ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ.Մ.

1985 թ. մարտին հրավիրված Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի պլենումը շրջադարձային երևույթ դարձավ Խորհրդային Միության պատմության մեջ: Արմատապես փոխվեց երկրի կուսակցական, պետական իշխանության ղեկավար կազմը:

ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Ա.Ա. Գրոմիկոն, Մինիստրների խորհրդի նախագահ մինչև 1985 թ. աշունը մնաց Ն.Ա. Տիխոնովը, որին փոխարինեց Ն.Ի. Ռիժկովը: Երկրի նոր ղեկավարությունը 1985 թ. ԽՄԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումում, իսկ հետո նաև կուսակցության XXVII համագումարում՝ 1986 թ. փետրվար, երկրի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում մշակեց նոր կուրս: Այն հայտնի է նաև որպես արագացման կուրս և նշանակում էր երկրի տնտեսական ոլորտի աճ, որը պետք է իրագործվեր մարդկանց էներգիան ներդնելով կուսակցության և կառավարության առաջացրած խնդիրները լուծելու համար: Անհրաժեշտ էր նաև վերականգնել և ամրապնդել կուսակցության և պետական իշխանության հեղինակությունը:

Կուսակցությունը նաև կարևորում էր իր երկրի տնտեսության վերափոխումը գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա: Այդ նպատակով շեշտը դրվում էր երկրի կառավարման արդյունավետության և աշխատանքի շահագրգռվածության բարձրացման հարցերի վրա: Դժվար չէ տեսնել, որ երկրի նոր ղեկավարությունը ինչպես երբեք բավական մեծ և բարդ խնդիրներ էր դնում ողջ հասարակության առջև, որը նաև պահանջում էր փոխել կուսակցական աշխատանքի մեթոդները, է՛լ ավելի խորացնել սոցիալական ժողովրդավարության սկզբունքները և այլն: Կուսակցության արագացման կուրսը նաև ենթադրում էր երկրի խոշոր ոլորտներում իրականացնել արմատական վերափոխումներ, որոնք ոչ թե սոսկ մերկա-

պարանոց կարգախոսներ էին, այլ բավական լուրջ և երկարատև աշխատանքի մարտահրավեր՝ երկիրը վերափոխելու և զարգացնելու համար:

Սակայն, ցավոք, ժամանակը ցույց տվեց, որ արագացման կուրսը, որն ավելի շատ հենվում էր զանգվածների և հատկապես երիտասարդ սերնդի էնտուզիազմի, հայրենասիրական պոռթկման և ոգևորության վրա, չէր կարող լինել տևական և ցանկալի արդյունքներ տալ, եթե չընդգրկեր երկրի կյանքի բոլոր ոլորտները և չգնար ավելի արմատական փոփոխությունների: Անհրաժեշտ էր փոխել շեշտադրումները և ընդունել հասարակության զարգացման առավել ընդունելի և հեռանկար խոստացող տարբերակ, որն էլ հայտնի է որպես «գորբաչովյան վերակառուցում» անունով: Եվ եթե արագացումը համարվում էր երկրի կուսակցության նպատակը, ապա վերակառուցումը պետք է դառնար միջոց՝ այդ նպատակն իրականացնելու համար:

1987-1988 թթ. վերակառուցումը գլխավորապես դարձավ երկրի համար արմատական տնտեսական բարեփոխում իրականացնելու կարևոր լծակ, որին ավելացվեցին նաև քաղաքական բարեփոխումը, երկրի գաղափարախոսության նորացումը, հրապարակայնությունը, հասարակության ժողովրդավարացումը և այլն:

Պատասխանելով այն հարցին, թե ինչու է անհրաժեշտ վերակառուցումը, Մ.Ս. Գորբաչովն ասում էր, որ դա ճանապարհ է իրականացնելու համար կուսակցության արագացման կուրսը: Նա նաև նշում է, որ ամեն ինչ պետք է անել, որ վերակառուցումը կրի անվերադարձ բնույթ և շարժման մեջ ներքաշի հսկայական ուժեր: Ըստ նրա՝ վերակառուցումը միայն մեկ պահի ակտ չէ, այլ պատմական որոշակի ժամանակաշրջանի գործընթաց, որն ընդգրկում է երկրի կառավարման համակարգը, տնտեսավարման մեթոդները և այլն: Վերակառուցումը ենթադրում է լայն հրապարակայնություն, հասարակության ժողովրդավարացում, երբ մարդ-անհատն իրեն զգում է երկրի տեր, որի վրա մեծ պատասխանատվություն է դրված և այլն[1]:

Հասարակության ժողովրդավարացում նաև ենթադրում էր ավելի օպտիմալ օգտագործել հասարակության հոգևոր ներուժը, հաստատել սո-

[1] Տե՛ս Ускорение социально-экономического развития страны – задача всей партии, всего народа. Документы и материалы, М., 1986, էջ 437-458:

ցիալական արդարություն և լուծել երկրի ազգամիջյան հարաբերություններում առկա խնդիրները:

1989 թ. հուլիսի 18-ին ԽՄԿԿ Կենտկոմում հրավիրված խորհրդակցության ժամանակ, խոսելով վերակառուցման մասին՝ որպես օրվա արմատական խնդրի, Մ.Ս. Գորբաչովը նշում է, որ իրականում երկիրն ապրում է վերակառուցման քննական ժամանակաշրջան, որը, մյուս բնագավառներից զատ, վերաբերում է նաև կուսակցության աշխատանքի վերակառուցմանը, քանի որ այն երկար ժամանակ հիմնված էր կառավարման վարչահրամայական համակարգի սկզբունքների վրա և ապրում էր նրա օրենքներով, որոնք էլ պետք է փոխվեին: Ըստ այդմ՝ կուսակցությունը պետք է հրաժարվի իր դարն ապրած կառավարման մեթոդներից և վերադառնա աշխատանքի Ժողովրդավարացման, ազատական մեթոդներին: Խնդիր էր դրվում կուսակցությունը հանել այսպես կոչված շրջափակման վիճակից և դնել շարժման մեջ[2]: «Սոցիալիստական գաղափարը և հեղափոխական վերակառուցումը» հոդվածում Գորբաչովը, կրկին խոսելով վերակառուցման մասին, նշում է. «Վերակառուցումը ամբողջական հեղափոխական գործընթաց է, որն իրականացվում է ժողովրդավարական մեթոդներով, ժողովրդի կողմից ու ժողովրդի համար, որի նկատմամբ կուսակցությունը հանդես է գալիս որպես նրա քաղաքական ավանգարդ: Իսկ կուսակցության կողմից դրսևորվող ակտիվությունն ու պատմական նախաձեռնությունները նրա ավանգարդային դերի բնական արտահայտությունն են: Եվ կուսակցությունը որոշման իրավունքը իր մենաշնորհը չի դարձնում: Ամեն մի օգտակար նախաձեռնություն, որտեղից էլ որ այն ելնելիս լինի, հարկավոր է վերակառուցմանը, քանզի նրա կենսական տոնուսը քաղաքական իմաստով կախված է ժողովրդավարության զարգացումից, որի գործառույթը մասնավորապես ժողովրդական նախաձեռնության խթանումն է[3]:

Որքան էլ որ այդ հարցադրումները, հատկապես մեր օրերում գնահատելու տեսանկյունից, հռչակագրային բնույթ էին կրում, սակայն, այնուամենայնիվ, տվյալ ժամանակահատվածում առանց լուրջ, արմատական վերափոխումների խորհրդային հասարակությունը չէր կարող առաջընթաց

[2] Տե՛ս Демократизация советского общества: истоки, проблемы, решения, М., 1989, էջ 7, 11:

[3] Տե՛ս Խորհրդային Հայաստան, 29.11.1989:

ապրել: Իսկ դա նշանակում էր, որ նոր պայմաններում հասարակության մեջ կուսակցության դերն արմատապես փոխվում էր, որի գլխավոր գործառույթներից էին մշտական զարգացումը, հասարակական մտքի հարստացումը, հասարակության համար ժողովրդավարական զարգացման օրինակ լինելը և այլն: Այսինքն՝ պետք է պայմաններ ստեղծվեին, որ հասարակության մեջ առանց ցավի հակադրվեին տարբեր կարծիքներ, իսկ հարցերի լուծման համար առաջ քաշվեին այլընտրանքային լուծումներ, կարծիքներ՝ պահպանելով կուսակցության միասնությունը հատկապես սկզբունքային, ռազմավարական նշանակություն ունեցող հարցերում:

Մ.Ս. Գորբաչովը նաև կարևորում էր կուսակցության սերտ փոխհարաբերությունները տարբեր հասարակական կազմակերպությունների և շարժումների հետ: Նման դեպքերում, ըստ նրա, կուսակցությունն ավելի կամրապնդեր դիրքերը, որն էլ հնարավորություն կտար, հասարակության ողջ մտավոր, կենսառատ ուժերը ներառելով, մշակելու երկրի ընդհանուր քաղաքականությունն ու գործողությունների ծրագիրը[4]:

Վերակառուցման շրջանում կարևոր նշանակություն էր ստանում նաև ոչ ֆորմալ կազմակերպությունների գործունեությունը, որոնք պայքարում էին տասնամյակների ընթացքում երկրում հաստատված, նորի, առաջավորի զարգացման համար խոչընդոտ դարձած արատավոր երևույթների դեմ: Այդ իմաստով կարևոր էր նաև այն հարցադրումը, թե վերակառուցման ընթացքում իրականում ինչպիսին պետք է լիներ կոմունիստական կուսակցությունը, նրա քաղաքական կերպարը: Պատասխանելով այդ հարցին՝ Մ.Ս. Գորբաչովն ասում է, որ կուսակցությունը ողջ հասարակության համար պետք է լինի հասարակության ժողովրդավարական զարգացման օրինակ և առանց վախենալու պայմաններ ստեղծի հակադիր կարծիքների, այլընտրանքային հարցադրումների, տարբեր մոտեցումների ազատ դրսևորման համար[5]: Նա նաև ընդգծում է, որ վերակառուցման ուղղությամբ աշխատանքը պետք է սկսվի յուրաքանչյուրն ինքն իրենից, որոշելով իր քաղաքացիական դիրքորոշումը, սկսած քաղաքական, աշխատանքային գործունեության ակտիվացումից, հանձնարարված գործի

[4] Տե՛ս Демократизация советского общества: истоки, проблемы, решения, էջ 12-13:
[5] Նույն տեղում:

նկատմամբ պատասխանատվությունից հանուն վերջնական արդյունքների և այլն[6]:

Ինչ խոսք, թվարկված խնդիրները, հարցադրումները որքան էլ կարևոր էին, տեղին, սակայն սոսկ խոսքեր էին, քանի որ միութենական հանրապետություններում, առավել ևս տարբեր կարգի ինքնավար կազմավորումներում մարդիկ նույնանման չէին արձագանքում կուսակցության վերադասի կարգախոսներին և ընկալում դրանք: Նրանցից շատերն անթաքույց բարձրաձայնում էին Խորհրդային Միությունից դուրս գալու, անկախություն ձեռք բերելու մասին և վերակառուցումն ընկալում և մեկնաբանում էին այլ դիրքերից, մանավանդ որ բախվում էին կարգախոսներին հակառակ իրականության հետ, որն էլ հաճախ մարդկանց մեջ ծնում էր անտարբերություն, դեռ ավելին՝ վերակառուցման սկզբունքներին հակառակ դիրքորոշում: Եվ եթե ժողովրդական զանգվածների մի մասն այլ դիրքորոշում և մոտեցում ուներ գորբաչովյան վերակառուցման նկատմամբ և այն ավելի շատ օգտագործում էր ազգային որոշ հարցեր բարձրացնելու համար և այլն, ապա Հայաստանի կոմկուսը, հատկապես Կենտկոմը ընդունում էր որոշումներ, որոնք բխում էին ԽՄԿԿ Կենտկոմի սկզբունքներից:

1988 թ. մայիսի 13-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն քննարկել է ապրիլի 5-ին «Правда»-ում հրապարկված «Վերակառուցման սկզբունքները, հեղափոխական մտածողությունը և գործողությունները» հոդվածը և արձանագրել, որ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն լիովին պաշտպանում է վերոհիշյալ հոդվածը, որտեղ տրված էր խոր վերլուծություն ԽՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումից և ԽՄԿԿ 27-րդ համագումարից հետո: Հոդվածում նաև խոսվում էր այն մասին, որ անհրաժեշտ է խորհրդային հասարակության տնտեսական, սոցիալական, հոգևոր ոլորտներում իրականացնել արմատական վերափոխումներ: Նաև նշվում էր, որ երբ բոլորը նախապատրաստվում են Համամիութենական կուսակցական XIX կոնֆերանսին, է՛լ ավելի է պահանջվում մեծ պատասխանատվություն երկրի ճակատագրի նկատմամբ: Հոդվածում կարևորվում էր քաղաքական նոր մտածողության ձևավորման հարցը՝ պատմությունից օբյեկտիվ և օգտակար

[6] **Горбачев М.С.** Перестройка неотложна, касается всех и во всем. Сборник материалов о поездке М.С. Горбачева на Дальний Восток, 25-31 июля 1986 года, М., 1986, с. 38.

դասեր քաղելու ունակությունը, սոցիալիստական ժողովրդավարության ներուժի ամբողջովին օգտագործումը, մարդկային գործոնի ակտիվացումը և այլն: Ներկայացնելով այդ մտքերը՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն նաև նշում է, որ Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը, դրականորեն ընդունելով այդ հոդվածը, առաջ քաշված դրույթները, եզրակացությունները և այլն, բնականաբար, հանձնարարում է համապատասխան մարմիններին՝ կուսակցական քաղկոմներ, շրջկոմներ, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն և այլն, քննարկել և անել անհրաժեշտ առաջարկներ, մոտեցումներ:

Իհարկե, Կենտկոմի բյուրոն նշում է նաև որոշ թերությունների, բացթողումների մասին, որոնք խանգարում էին վերակառուցման գործընթացին: Հատկապես կարևորվում էր ոչ թե խոսքով, այլ գործով պայքարը կուսակցական, խորհրդային, գերատեսչական ապարատի բյուրոկրատական մոտեցումների, սկզբունքների դեմ: Հանձնարարվում էր համապատասխան մարմիններին հրապարակել վերլուծական, ինչո՞ւ չէ՝ նաև քննադատական հոդվածներ՝ վերակառուցման և երկրի մյուս գործընթացների վերաբերյալ[7]:

Դժվար չէ տեսնել, որ Հայաստանի կոմկուսը իր որոշումներում լիովին պաշտպանում էր ԽՄԿԿ Կենտկոմի գիծը, քաղաքականությունը, որը որքան էլ պահանջում էր մարդկանցից նոր մտածողություն, հեղափոխական մտածողություն, պատրաստ չէր փոխելու այն համակարգը, որն արդեն չուներ ներքին մղում գործող համակարգը զարգացնելու համար: Այդ հանգամանքն էլ պետք է դառնար այն խոչընդոտը, որն ավելի էր մեծանում և ծնում հենց վերակառուցումից բխող նոր մոտեցումներ, նոր հարցադրումներ: Այդ շարքում գլխավորն աստիճանաբար դառնում էր Կենտրոնից անջատվելու և սեփական ճակատագիրը ինքնուրույն որոշելու ձգտումը, որն էլ պետք է դառնար Միության փլուզման գլխավոր պատճառներից մեկը, և որի իրականացումն ստանձնեցին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետությունները, նաև Խորհրդային Հայաստանի ընդհատակում ձևավորված այլախոհական շարժումը: Եվ որքան էլ որ շարժումն ամեն օր իշխանությունների կողմից ենթարկվում էր տարբեր կարգի հետապնդումների, ձերբակալությունների, այնուամենայնիվ, չվիատվեց, շարունակեց պայքարել՝ ստանալով ժողովրդական զանգված-

[7] Տե՛ս ՀՀ ազգային արխիվ, ֆ., տ. 82, գ. 23 թ. 160-162:

ների համընդհանուր աջակցությունը: Այդ հանգամանքն էլ դարձավ այն գլխավոր պատճառներից մեկը, որի շնորհիվ նաև վերակառուցման ծնունդ Արցախյան շարժումը օր օրի դառնում էր համաժողովրդական՝ ստանալով լայն զանգվածների աջակցությունը. ի վերջո այն հասավ հաջողությունների և պայքարեց իր ճակատագիրը ինքնուրույն կերտելու համար:

Ի դեպ, Արցախյան շարժումը վերջին հաշվով նաև ազգային հարց էր, որի իմաստը թերևս ամենից շատ աղավաղվել է Խորհրդային Միությունում՝ հակառակ պաշտոնական քարոզչության, որը կառուցված էր ժողովուրդների, ազգերի անխախտ բարեկամության և եղբայրության կեղծ, իրականությունից բավական հեռու հիմքի վրա: Մինչդեռ իրականությունն այն էր, որ հատկապես 1980-ական թթ. Խորհրդային Միությունում այդ հարցն է՛լ ավելի սրվեց: Այդ երևույթին մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ 1977 թ. ԽՍՀՄ-ում ընդունված այսպես կոչված բրեժնևյան նոր Սահմանադրությունով փաստվում էր մի իրողություն, ըստ որի՝ իբր Խորհրդային Միությունում ազգերի, ազգությունների մերձեցման հետևանքով ձևավորվել էր նոր հասկացություն՝ «խորհրդային ժողովուրդ», հետևաբար ենթադրվում էր, որ ռուսաց լեզուն դարձել էր պետական լեզու:

Բնական է, նման շտապողականությունը տարբեր ազգերի, ժողովուրդների շրջանում կառաջացներ դժգոհություն: Այդ դժգոհությունը հատկապես դրսևորվեց Հայաստանում և Վրաստանում, որոնք, ի հակադրություն կենտրոնի, իրենց հանրապետությունների սահմանադրություններում ընդունեցին որոշում հայերենը և վրացերենը պետական լեզու ճանաչելու մասին: Ուշագրավ է, որ այդ նույն ժամանակ ՌԽՖՍՀ-ում, միջինասիական հանրապետություններում, Ղազախստանում ապրող գերմանացիների մեջ առաջացավ ձգտում՝ ստեղծելու սեփական ինքնավարությունները, իսկ մերձբալթյան ժողովուրդների շրջանում հակառուսական տրամադրություններն է՛լ ավելի սրվեցին[8]:

Ի դեպ, Խորհրդային Միությունում ազգամիջյան հակասությունների առաջացման պատճառներից մեկը երկրի տարբեր շրջանների միջև ոչ հավասարաչափ տնտեսական զարգացումն էր: Դա հատկապես ընդգծված դրսևորվում էր Լեռնային Ղարաբաղում, որին մեծապես նպաստել էր խորհրդային և առավել ևս հետխորհրդային Ադրբեջանի իշխանությունների բացահայտ կամ քողարկված հակահայ քաղաքականությունը: Այն

[8] Տե՛ս **Елисеева Н.В.** История перестройки в СССР 1985-1991 гг., М., 2016, էջ 146-147:

ավելի բացահայտ բնույթ կրեց, երբ 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը, լսելով և քննարկելով պատգամավորների ելույթները, ընդունեց որոշում՝ «Միջնորդելու Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդներին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին դուրս գալու Ադրբեջանի կազմից և միանալու Խորհրդային Հայաստանին», դիմեց թե՛ Ադրբեջանի և թե՛ Հայաստանի Գերագույն խորհուրդներին՝ դրսևորել ԼՂԻՄ-ի աշխատավորների զգացմունքների նկատմամբ խոր ըմբռնում և լուծել այդ հարցը, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղը միավորել Խորհրդային Հայաստանի հետ, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ընդունելու դրական որոշում, այն է՝ Լեռնային Ղարաբաղը միավորել Խորհրդային Հայաստանին[9]: Սակայն, ցավոք, Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն չընդառաջեցին Լեռնային Ղարաբաղի աշխատավորների արդարացի պահանջներին, այլև թե՛ Լեռնային Ղարաբաղի և թե՛ Ադրբեջանի այլ քաղաքներում, շրջաններում ապրող հայության նկատմամբ վայրագություններ իրականացրին՝ 1988 թ. փետրվարի 27-29-ին Սումգայիթում սպանություններ, այլ քաղաքներում ջարդեր և այլն:

Ցավոք, խորհրդային իշխանությունները համապատասխան քաղաքական գնահատական չտվեցին այդ ամենին՝ է՛լ ավելի սրելով անկախության համար պայքարը: Կանգնեցնել այն այլևս հնարավոր չէր, որքան էլ խորհրդային համապատասխան մարմինները շարունակում էին աշխատել հին, կոշտ վարչահրամայական մեթոդներով՝ է՛լ ավելի խորացնելով կենտրոն-ծայրամաս հակասությունները: Իսկ դա նշանակում էր, որ գորբաչովյան վերակառուցումը, անկախ սահմանափակումներից, կարծրատիպերից, այլևս չէր կարող կանգնեցնել վերակառուցմամբ ծնված և վերակառուցումից առաջացած ժողովրդական զանգվածների ամենօրյա պայքարը ազատության, անկախության համար: Այդ պայքարն էլ տվեց իր պտուղները. թե՛ Հայաստանը, թե՛ Լեռնային Ղարաբաղը հռչակեցին իրենց անկախությունը: Թեև Արցախն առ այսօր դեռևս չի ճանաչվել որևէ երկրի կողմից, սակայն ավելի քան քառորդ դար է, որ Արցախի ժողովուրդը վստահորեն շարունակում է կերտել իր ապագան, լի վճռականութ-

[9] Տե՛ս Советский Карабах (21.02.1988), վերցված է «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 1988-1989 թթ.», Ե., 2014, № 16:

յամբ՝ պայքարել այդքան թանկ ձեռք բերած անկախությունը, ազատությունն ամեն գնով պաշտպանելու և ամրապնդելու համար:

СУЩНОСТЬ ГОРБАЧЕВСКОЙ ПЕРЕСТРОЙКИ И ЭТАПЫ ЕЕ РАЗВИТИЯ (1985-1990 ГГ.)

МАТИНЯН Л.В., АБРААМЯН Г.М.

Резюме

Горбачевская перестройка вдохновила граждан на борьбу за восстановление свободы и независимости. Эта борьба дала свои плоды, в итоге Армения и Нагорный Карабах также заявили о своей независимости, хотя Арцах как суверенное государство по сей день не признан ни одной страной. Более четверти века народ Арцаха уверенно строит свое будущее и полон решимости бороться, защищать и укреплять столь дорогой ценой приобретенную независимость и свободу.

THE ESSENCE OF GORBACHEV'S RECONSTRUCTION AND STAGES OF ITS DEVELOPMENT (1985-1990)

L. MATINYAN, H. ABRAHAMYAN

Abstract

Gorbachev's reconstruction inspired citizens to struggle for the restoration of freedom and independence. This struggle gave its benefits, Armenia and Nagorno Kharabakh also declared their independence, although Artsakh has not been recognized yet as a sovereign state by any country. But for more than a quarter century, the people of Artsakh confidently continue to build their future with determination to fight, defend and strengthen for their independence and freedom, which have been so dearly acquired.